ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Իրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հուլիսի 19-ի թիվ 2 որոշմամբ և իրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ԵՄՍՔԿ-ԳՀԾՁԲ-19/6

<<Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն>> ՀՈԱԿ-ի կարիքների համար հանրային կարգի պաշտպանության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄՍՔԿ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 17.07.2019թ ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 19.07.2019թ տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1

Պահանջվող պահնորդների ընդհանուր քանակը, ինչպես նաև օրական և ժամային ռեժիմները, այսինքն՝ օրական քանի պահնորդի ներկայություն է անհրաժեշտ և ինչ ժամային գրաֆիկով::

Պարզաբանում N 1

Պահնորդական ծառայությունը պետք է իրականացվի ՀՀ, ք. Երևան, Մոսկովյան 3 հասցեում գտնվող <<Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն>> ՀՈԱԿ-ի վարչական տարածքում, տարվա բոլոր օրերին, ներառյալ՝ ոչ աշխատանքային և տոն օրերը, յուրաքանչյուր օր՝ շուրջօրյա ռեժիմով, մեկ պահակակետով և առնվազն մեկ պահնորդով:

Հարցադրում N 2

Ռադիոկապի համար համապատասխան հաճախականության օգտագործման թույլտվությունն ինչ նպատակով է անհրաժեշտ: Եթե այն անհրաժեշտ է պահնորդների միջև ռադիոկապի ապահովման նպատակով, ինչի համար Ձեր կողմից պահանջվող թույլտվություն ահրաժեշտ չէ, ապա խնդրում ենք պարզաբանել պահանջի առկայությունը:

Պարզաբանում N 2

Ռադիոկապի անհրաժեշտությունը կայանում է պահնորդի և Ծառայություն մատուցող ընկերության միջև օպերատիվ կապ հաստատելու մեջ, քանի որ գիշերային ժամերին, շրջայցերի ժամանակ և ընդհանրապես, արտակարգ իրավիճակներում օպերատիվ կապ հաստատելու ամենաարդյունավետ միջոցը ռադիոկապն է:

Հարցադրում N 3

Պահնորդի նշված աշխատանքային փորձը տվյալ կազմակերպությունում, համաձայն որակավորման վկայականի, թե ընդհանուր առմամբ 5 տարի:

Պարզաբանում N 3

Ընդհանուր առմամբ պահնորդային գործունեության 5 տարվա փորձ, պարտադիր չէ հենց այդ կազմակերպությունում:

Հարցադրում N 4

Ընդհանուր պատասխանատվության ապահովագրության առումով խնդրում ենք ավելի մանրամասնել նշված պահանջի ապահովման գործընթացը /ինչպիսի ապահովագրություն՞ - համապատասխան ընկերությունների կողմից տրված, համագործակցության պայմանագրով սահմանված ,,,,,,,,,,/:

Պարզաբանում N 4

<<պետք է ունենա ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն, առնվազն 10 000 000 /տաս միլիոն/ դրամի չափով ընդհանուր ապահովագրական գումարով՝ պահնորդական պահպանության/ծառայությանների մատուցման իրականացման ընթացքում ծառայություններ մատուցողի կողմից թույլ տված սխալի, անփութության կամ այլ բաց թողնման հետևանքով պատճառած վնասների հատուցման նպատակով:>>

Այս պահանջը վերաբերվում է Ծառայություն մատուցող ընկերությանը: Ապահովագրությունը պետք է փոխհատուցի ընկերության աշխատակցի(պահնորդի) անփութության պատճառով Պատվիրատուին հասցված նյութական վնասը: Ծառայություն մատուցելու գործընթացը ստանձնելու պահին Ընկերությունը պետք է ունենա ապահովագրության պայմանագիր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ԵՄՍՔԿ-ԳՀԾՁԲ-19/6** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Կ. Դրամբյանին:

Հեռախոս 010-565173
էլ. փոստ karendrambyan@mail.ru
ԵՄՍՔԿ-ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով